ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ VII ԿՈՆԳՐԵՍԸ

1964 թ. օգոստոսի 3—10 Մոսկվայում տեղի ունեցավ մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային VII կոնգրեսը։

Մարդու և ժողովուրդների մասին իրարից տարբեր, բայց և իրար հետ սերտորեն շաղկապված այս երկու գիտությունների կոնգրեսի գումարումը չորս տարին մեկ՝ արդեն կայուն ավանդական ուժ է ստացել։ 1934 թ. Լոնդոնում գումարված առաջին կոնգրեսից հետո տարեցտարի գիտնականների այդ համաժողովը ավելի խոշորանում է, ծավալվում և ավելի բազմակողմանի դառնում, ոչ միայն նորանոր երկրների գիտնականների մասնակցությամբ, այլև քննարկվող հարցերի ընդգրկումով։

Եթե առաջին կոնգրեսի մասնակիցների թիվը չէր հասնում երկու հարյուրի, ապա 1960 թ. Փարիզում գումարված կոնգրեսին արդեն մասնակցում էին շուրջ երկու հազար գիտնականներ։ Հենց այդտեղ էլ մեծ գոհունակությամբ և սպասելիքներով ընդունվեց սովետական պատվիրակության առաջարկը՝ հաջորդ կոնգրեսը Մոսկվայում գումարելու վերաբերյալ։

Մարդաբանական և ազգագրական գիտությունների VII մոսկովյան կոնգրեսը գիտնականների միջազգային մի մեծ համաժողով էր և ամենից ավելի ներկայացուցչականը եղավ։ Նրան մասնակցում էին շուրջ 2200 պատգամավոր աշխարհի բոլոր մայրցամաքների 58 երկրներից և մի քանի հարյուր հյուրեր, ընդամենը ավելի քան 2500 գիտնականներ։

Ողջունելով կոնգրեսի բացումը, Սովետական Միության Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Կ. Ն. Ռուդնևը իրավացի ընդգծեց, որ մեր ժամանակը բուռն ռևոլյուցիոն զարգացման ժամանակ է՝ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, սոցիալ-տնտեսական մեծ վերափոխությունների ժամանակ։ Սոցիալիստական երկրների ձեռք բերած հսկայական հաջողությունների շնորհիվ սոցիալիստական գաղափարները ավելի ու ավելի նվաճում են մարդկանց մտքերն ու սրտերը. գաղութակալության ամոթալի սիստեմը գտնվում է իր կատարյալ փլուզման եզրին. նորանոր երկրներ, ազատագրվելով գաղութային լծից, ձեռք են բերում անկախություն, կառուցում են իրենց պետականությունը, տնտեսությունը և մշակույթը։ Աչքի ընկնող առաջադիմություն են ունեցել նոր կարգացող երկրները։ Այնորեն ծավալվել է պայքարը մարդկանց ազատության, հավասարության, եղբայրության և երջանկության համար, աճել է փոխադարձ ըմբռնումը ժողովուրդների միջև, մեծ ուժ է դարձել պայքարը խաղաղության համար։

Կոնգրեսն ընթանում էր այն նշանաբանի ներքո, որ մարդու և մարդկային հասարակության կյանքով ու մշակույթով զբաղվող գիտնականները պետք է մշտապես բարձր պահեն իրենց սգնիվ պարտքի գիտակցությունը հասարակության հանդեպ. օգնեն ժողովուրդների բարեկամությանն ու մերժեն այն, ինչ մտացածին է, ոչ գիտական և խանգարում է դրան։

Իսկական գիտությունը, ընդգծեց ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ս. Վ. ԿԵԼԴԻՇԸ, անհամատեղելի է ամեն կարգի, ըստ էության հակամարդասիրական «տեսություններ»ի քարոզի հետ՝ որոշ ժողովուրդների իբրև թե ռասայական ոչ լիարժեքության և մյուսների ռասայական գերազանցության վերաբերյալ. տեսություններ, որոնք նպատակ են հետապնդում ոչ թե միավորել մարդկանց, այլ անջատել նրանց իրարից։

Ինորոշ է, որ կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էրն Աֆրիկայի ու Ասիայի՝ տարբեր ռասաների պատկանող մի շարք ժողովուրդների պատվիրակներ. ժողովուրդներ, որոնք դեռևս երեկ հանդիսանում էին օտարերկրյա մարդաբանների և ազգագրագետների ուսումնասիրության առարկան, իսկ այսօր հետազոտող գիտնականներ են տվել իրենց ծոցից, որոնք մեծ սիրով ու հաջողությամբ ձեռնարկել են հարազատ ժողովուրդների կյանքի և մշակույթի ուսումնասիրությունը։

Կոնգրեսի ինորոշ կողմերից մեկն էլ նրա գումարվելն էր սոցիալիստական մեծ տերության մայրաքաղաքում և սովետական գիտնականների մասսայական մասնակցությունը նրա

աշխատանքներին, որով մեծապես հետաքրքրված էին օտարերկրյա հարյուրավոր գիտնականներ։ Դժվար չէր նկատել, որ այդ հետաքրքրությունը ուներ երկու էական կողմ. նախ՝ սովետական հասարակական գիտությունների մեթոդոլոգիական հիմունքները, կատարվող աշխատանքի գլխավոր ուղղություններն ու մեթոդները էին շարժում օտարերկրյա գիտնականների հետաքրքրությունը և երկրորդ՝ սովետական բազմազգ գիտնականների աշխատանքի փորձն ու կոնկրետ նվաճումները՝ սովետական հարյուրից ավելի ժողովուրդների մարդաբանական, ազգագրական և մշակութային ուսումնասիրությունների բնագավառներում։

Մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային միության նախագահ, ֆրանսիական ակադեմիական գիտական Անրի Վալլան. ողջունելով կոնգրեսի բացումը, արտահայտմանյան պատգամավորների անունից գոհունակություն հայտնեց հնարավորության համար, որ կոնգրեսը մեծ հնարավորություն ներ է տվել լայնորեն շփվելու սովետական մարդաբանների և ազգագրագետների հետ, որոնց ներդրումը համաշխարհային գիտության մեջ հանրահայտ է և այժմ արտասահմանյան գիտնականները մոտիկից կարող են ըստ արժանվույն գնահատել այդ ավանդը։

Կոնգրեսի պրեզիդենտ, սովետական ակադեմիական գիտական Ս. Պ. Տոլստովը իր ծավալուն զեկուցմամբ ամփոփեց սովետական մարդաբանների և ազգագրագետների նվաճումները, ուսուցագրեց մեզ մոտ տարվող աշխատանքների հիմնական ուղղությունները, նշեց այդ գիտությունների առջև ծառացած խնդիրները, մասնավորապես ընդգծելով դրանց շրջադարձի դեպի այժմեականությունը։ Գիտնականը չի կարող դուրս մնալ ժողովուրդների կյանքում տեղի ունեցող բուռն փոփոխությունների ոլորտից։ Ավելին, նա ոչ միայն պետք է լուսաբանի ժողովուրդների պատմության անցյալ ու նոր եղելությունները, այլև պատասխան տա մարդկանց և հասարակության կյանքի ու կենցաղի առաջադրած հրատապ հարցերին։

Կոնգրեսի աշխատանքների ծրագիրը վերին աստիճանի ծավալուն էր. բավական է ասել, որ միայն զեկուցումների թիվը հասնում էր հազարի, որից երեք հարյուրից ավելին սովետական գիտնականների զեկուցումներն էին։ Սովետական գիտնականների 243 զեկուցում ընդգրկված էր սեկցիաների օրակարգով, իսկ 98 զեկուցում, որ տպագրված ու բաժանված էր պատգամավորներին, սեկցիոն նիստերում քննարկվելու էր ըստ հնարավորության։ Տեղի ունեցավ ընդամենը չորս պլենար նիստ։ Բացի կոնգրեսի բացմանը և փակմանը նվիրված նիստերից, երկու պլենար նիստերում լսվեցին պրոֆ. Բիսվասի (Հնդկաստան) զեկուցումը «Ռասաների և կաստաների միջև փոխհարաբերության հարցի ներկա վիճակը Հնդկաստանում» և պրոֆ. Բանդեի (Բուլղարիա) զեկուցումը «Ժամանակակից կենցաղի ուսումնասիրության հաջողությունները Եվրոպայի սոցիալիստական երկրներում» թեմաներով։

Կոնգրեսի հիմնական աշխատանքներն ընթացան սեկցիաներում և սիմպոզիումներում։ Բացվում էին 27 սեկցիա, որոնց նիստերը տեղի ունեցան օգոստոսի 4—7-ը և 17 սիմպոզիում, որոնց նիստերը տեղի ունեցան օգոստոսի 8-ին և 10-ին։ Սեկցիաները կրում էին ինչպես թեմատիկ, նույնպես և աշխարհագրական բնույթ։ Նկատի ունենալով, որ հիմնականում սեկցիաներն էին արտահայտում կոնգրեսի կազմը, քննարկվող հարցերի շրջանակները ու բնույթը տալիս ենք նրանց ցուցակը։

1. Ֆիզիոլոգիական մարդաբանության (հեմատոլոգիայի և սերոլոգիայի ենթասեկցիաներով), 2. Մարդու մարմնաբանության (սպորտային մարդաբանության և դերմատոգլիֆիկայի ենթասեկցիաներով), 3. Անատոմիական մարդաբանություն, 4. Էթնիկ մարդաբանություն, 5. Հին մարդաբանության և մարդու ծագման, 6. Տեսության և մեթոդոլոգիայի, 7. Հասարակական կառուցվածքի, 8. Նյութական մշակույթի, 9. Պալեոէթնոգրաֆիայի (հնագիտական, ազգագրության), 10. Ազգագրական բուսաբանության (էթնոբոտանիկա) և ազգագրական կենդանաբանության (էթնոզոոլոգիա), 11. Ազգագրական լեզվաբանության (էթնոլինգվիստիկա), 12. Ժողովրդական բանավոր ստեղծագործության, 13. Ժողովրդական երաժշտության, 14. Ժողովրդական թատրոնի և պարի, 15. Ժողովրդական կերպարվեստի, 16. Կրոնական պաշտամունքի և առասպելաբանության, 17. Գիրառական ազգագրության, 18. Էթնիկական աշխարհագրության, 19. Աֆրիկայի, 20. Ավստրալիայի և Օվկիանիայի, 21. Արևելյան և Հարավային Ասիայի, 22. Արևմտյան Ասիայի, 23. Արկտիկայի և Ենթարկտիկայի, 24. Հյուսիսային Ամերիկայի, 25. Հարավային և Կենտրոնական Ամերիկայի, 26. Եվրոպայի, 27. Թանգարանագիտության։

Հետաքրքիր և կարևոր հարցերը չափազանց շատ էին, ուստի բնական է, որ գիտնականները կարող էին մասնակցել իրենց հետաքրքրող հարցերի միայն մի փոքր մասի քննարկմանը։ Շնորհիվ այն բանի, որ կոնգրեսի բոլոր աշխատանքները տեղի էին ունենում Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի գլխավոր շենքում, մասնակիցները հնարավո-

րությունն ունեին արագորեն մեկ նիստից մյուսն անցնելու։

Հայկական ՍՍՀ-ից կոնգրեսին մասնակցում էր 26 պատգամավոր, դրանից 16-ը գիտությունների ակադեմիայի սիստեմում գտնվող հիմնարկներից և 10-ը՝ Հանրապետության այլ գիտական հաստատություններից։

Մեր Հանրապետության պատվիրակությունը կոնգրեսում հանդես եկավ 7 զեկուցումով և ակտիվ մասնակցությամբ սեկցիաների և սիմպոզիումների աշխատանքներին։ Ներկայացված զեկուցումները հետաքրքրություն առաջացրին և ուշադրության արժանացան։ Պետք է նշել մանավանդ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի զեկուցումը լեթնիկական աշխարհագրական սեկցիայում։ Զեկուցողը հելլենիստական դարաշրջանի Հեղինակ Պտղոմեոսի և VII դարի Հայկական աշխարհացույցի տվյալների հիման վրա քննարկեց Կովկասի լեռնական ժողովուրդների բնակության վայրերի հարցը, ներկայացնելով իր կազմած երկու համապատասխան քարտեզները, որոնք մեծ հետաքրքրություն առաջացրին։

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Լիսիցյանը, որի վաստակը Հայկական պարային ֆոլկլորի ուսումնասիրության բնագավառում լայն ճանաչում է գտել, ժողովրդական թատրոնի և պարի սեկցիայում հանդես եկավ «Հայկական պարային և թատերական ֆոլկլորը» զեկուցումով, շարադրելով համապատասխան նյութերի հավաքման, գրառման, մշակման և ուսումնասիրության իր փորձը։ Մեծ հետաքրքրություն առաջացրեցին մանավանդ Ս. Լիսիցյանի ստեղծած պարի գրառման նշանները ու մեթոդը, որոնք ավելի կատարյալ պետք է համարվեն, քանի որ ուրիշ երկրներում գործածվող հարյուրների հասնող նշանների փոխարեն հեղինակը առաջարկել է 32 նշան, որոնցով կարելի է գրանցել ոչ միայն միզանսցենները, այլև մարմնի շարժման և պարի մանրամասնությունները։

Կոնգրեսի աշխատանքներում շատ կարևոր տեղ էին գրավում նաև սիմպոզիումները, որոնք, ընդհանրապես, կրում էին գերազանցապես թեմատիկ բնույթ և նվիրված էին որոշակի հարցերի։ Կոնգրեսում գործում էին հետևյալ սիմպոզիումները. 1. Մորգանի ուսմունքը նախնադարյան հասարակության պարբերացման մասին՝ ժամանակակից ազգագրության լույսի տակ. 2. Քոչվոր և նստակյաց բնակչության փոխհարաբերությունները. 3. Քաղաքի և արդյունաբերական ավանի ազգագրությունը. 4. Երկրագործական ազգագրություն (գյուղատնտեսական գործիքներ, տեխնիկա և այլն). 5. Հին և ժամանակակից ժողովրդի ծագման հարցը. 6. Արկտիկական զոնայի ազգագրության և մարդաբանության հարցերը. 7. Արևադարձային (անապատային, կիսաանապատային) զոնայի ազգագրության և մարդաբանության հարցերը. 8. Ազգագրական ատլասներ կազմելու մեթոդիկան. 9. Խաղաղօվկիանոսյան ավազանի պատմամշակութային կապերը. 10. Կարպատական պատմա-ազգագրական ընդհանրությունը. 11. Ժողովրդական արվեստի հավաքման աշխատանքների և նյութերի մշակման մեթոդիկան. 12. Բանավոր բանաստեղծության ժանրերի դասակարգումը. 13. Ժողովրդական երաժշտական գործիքները. 14. Բանվորական բանահյուսությունը. 15. Մարդաբանական անալիզի մեթոդները, ռասայական հատկանիշների կազմավորման գործոնները և ռասայական դասակարգման սկզբունքները. 16. Բրածո մարդակերպ արարածների դասակարգումը և նոմենկլատուրան. 17. Կենդանիների և մարդու միջև սահմանագծի հարցը։

Պատմ. գիտ. թեկնածու, ազգագրագետ Է. Վարդումյանը Արևմտյան Ասիայի սեկցիայում կարդացած իր զեկուցման մեջ բնութագրեց պատմական Հայաստանի XIX դարի հիմնական ազգագրական շրջանները, ելնելով ընդունելով բնակարանների տիպերը իրենց բնակելի, արտադրական և օժանդակ կառուցվածքներով, որոնց համապատասխանում են նաև մյուս ազգագրական տվյալները։ Զեկուցումը լուրջ հետաքրքրություն առաջացրեց։

Արվեստի ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Ս. Դավթյանը ժողովրդական կերպարվեստի սեկցիայում զեկուցեց հայկական ժանյակների մասին։ Ներկա գտնվողները համոզվեցին, որ հայկական ժանյակները մեզ հասածների շարքում ամենահիններն են, ունեն ինքնատիպ ազգային գծեր և աչքի են ընկնում բարձր արվեստով։ Դրանք տարածվել են առաջավոր Ասիայում, իսկ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո նաև արևմտյան երկրներում. երբ ժանյակներ գործելը դարձել էր ապրուստի միջոց իրենց երկրից ռեղահան արված հայ շատ ընտանիքների, կանանց և աղջիկների համար։

Արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Ռ. Աթայանի զեկուցումը ժողովրդական երաժշտության սեկցիայում նվիրված էր այն հարցին, թե հանճարեղ Կոմիտասը ինչպես էր հավաքում, ուսումնասիրում և մշակում հայ գեղջկական երգը, ստեղծելով դասական փորձ այդ բնագավառում, որը կարող է ուսանելի լինել նաև ուրիշների համար։

Պատմ. գիտ. թեկնածու, ազգագրագետ Է. Կարապետյանի զեկուցումը նվիրված էր հնամենի տոհմական և ընտանեկան հարաբերությունների վերաբերող մի կարևոր հարցի

պատրոնիմիային հայերի մեջ։ Այդ հարցի գիտական խոր բնութագիրը հեղինակի կողմից արդեն արժանացել է գիտնականների ուշադրությանը։ Թանգարանագիտության սեկցիայում խոշոր ուշադրությամբ լսեցին Հայաստանի պետական պատմական թանգարանի ավագ գիտաշխատող Ն. Ավագյանի զեկուցումը՝ մեր հանրապետության այդ նշանավոր թանգարանի ազգագրական ֆոնդերի մասին, մի թանգարան, որի արժեքների մասին մեծ գովեստով էին խոսում կոնգրեսից հետո Հայաստան այցելած օտարերկրյա գիտնականները։

Կոնգրեսի հայկական պատվիրակության անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել սեկցիաների և սիմպոզիումների աշխատանքներին և, բացի զեկուցումներից, հանդես են եկել նաև ելույթներով՝ քննարկվող հարցերի վերաբերյալ։ Նրանք առաջ քաշեցին լոկալ և ընդհանուր կուլտուրաների բնորոշման և փոխհարաբերությունների հարցը (փիլիսոփ. գիտ. թեկնածու Է. Սարգսյան), երկրագործական գործիքների կոորդինացված ուսումնասիրության և ընդհանուր տերմինոլոգիայի մշակման հարցը (պատմ. գիտ. թեկնածու Վ. Բդոյան), ազգագրական ատլասների կազմման ընդհանուր սկզբունքների մշակման հարցը (պատմ. գիտ. թեկնածու Ե. Վարդումյան), ժողովրդական արվեստի նյութերի և քաղաքային ֆոլկլորի հավաքման և կոմպլեքս ուսումնասիրության հարցը (Ս. Դավթյան. Կ. Սեգրոսյան)։

Կոնգրեսի հայ պատգամավորները արեցին նաև քննադատական դիտողություններ որոշ զեկուցումների առթիվ։ Պրոֆ. Բ. Առաքելյանը առարկելով Փոքր Ասիայում թուրքիզացիայի պրոցեսը VIII—IX դարերում սկսված լինելու տեսակետի դեմ, գտնում էր, որ մինչև սելջուկյան ներխուժումը Փոքր Ասիայի թուրքիզացիայի մասին խոսելը զուրկ է փաստական և գիտական հիմունքներից, որքանով որ խոսքը վերաբերում է էթնոգենեզի բարդ պրոցեսների մի ամբողջ կոմպլեքսի։ Է. Կարապետյանը կարևոր դիտողություններ արեց ընտանեկան համայնքի բնութագրության և բնորոշ կողմերի վերաբերյալ։ Ս. Լիսիցյանը, նախագահելով ժողովրդական թատրոնի և պարի սեկցիայի նիստերից մեկում, ամփոփեց օրվա զեկուցումները և իր դիտողությունները արեց վիճելի հարցերի առթիվ։

Կոնգրեսի աշխատանքների շատ կարևոր կողմերից մեկն էլ անձնական և խմբակական կոնտակտներն էին տարբեր երկրների գիտնականների միջև, որ իրականացվում էին լայնորեն։ Հայաստանի պատվիրակությունը այս տեսակետից ևս բավականաչափ ակտիվ գտնվեց, մանավանդ որ ակնհայտ էր մի շարք երկրների գիտնականների հետաքրքրությունը հայկական ազգագրության նկատմամբ։ Բացի անհատական զրույցներից, հայ պատվիրակության հետ խմբերով հանդիպումներ և զրույցներ ունեցան Հունգարիայի, Բուլղարիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Ֆինլանդիայի և այլ երկրների գիտնականները։

Կոնգրեսի առթիվ կազմակերպվեց գրքերի ցուցահանդես, որին մասնակցում էին սովետական բոլոր ռեսպուբլիկաները և որը գրավեց կոնգրեսի մասնակիցների ուշադրությունը, նպաստեց գրականության փոխանակությանը նրանց միջև։

Կոնգրեսի օրերին երկու սրահներում հաջողությամբ կազմակերպված էր ազգագրական և հնագիտական բնույթի կինոնկարների ցուցադրություն, որին Հայաստանը մասնակցում էր «Թանգարան բաց երկնքի տակ» կինոնկարով։ Կինոնկարների ցուցադրումը կոնգրեսի աշխատանքների ուշագրավ և կարևոր լրացումն էր հանդիսանում։

Կոնգրեսում եղան նաև վեճեր սովետական և արտասահմանյան գիտնականների միջև, մանավանդ Մորգանի ուսմունքի և հին հասարակության պատմության պարբերացման շուրջը, սակայն իշխողը փոխադարձ ըմբռնման ձգտումն էր, համագործակցության ոգին, ժողովուրդների մերձեցման, բարեկամության և նրանց միջև խաղաղության ամրապնդման գործին նպաստելու ոգին։ Դա կոնգրեսի աչքի ընկնող արդյունքներից մեկն էր։ Պատահական չպետք է համարել, որ կոնգրեսում, որին մասնակցում էին աշխարհի բոլոր հիմնական ռասաների ներկայացուցիչները, ռասայական տեսության կամ ռասիզմի ոչ մի արտահայտության տեղ չգտավ։ Ընդհակառակը, սովետական և արտասահմանյան գիտնականները համերաշխ էին ինչպես մարդու, նույնպես և ռասաների ծագման ու զարգացման պրոցեսի միասնական և համընդհանուր լինելու վերաբերյալ։

Գիտնականների կոնտակտներին և սովետական ժողովուրդների կյանքը, աշխատանքն ու ձգտումները ավելի լավ ճանաչելուն նպաստեցին նաև օտարերկրյա գիտնականների շրջագայությունները Մոսկվայում, Լենինգրադում, ՌՍՖՍՌ-ի, Ուկրաինայի տարբեր վայրերում, Միջին Ասիայի և Անդրկովկասի սովետական հանրապետություններում։

Հայաստան էր ժամանել կոնգրեսի պատգամավորների 33 հոգուց բաղկացած մի խումբ, որի մեջ մտնում էին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, ԳՖՌ-ի, Պորտուգալիայի, Նորվեգիայի և Նոր Զելանդիայի պատգամավորները՝ Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, հայտնի ազգագրագետ Մ. Ֆորտեսի գլխավորությամբ։ Հա-

յաստանում եղան նաև առանձին գիտնականներ Լեհաստանից, Բուլղարիայից, ԱՄՆ-ից, Իսրայելից, որոնք նույնպես կոնգրեսի պատգամավորներ էին։ Նրանց թվում էին բուլղարական ազգագրագետ Անաստաս Պրիմովսկին, որը ուսումնասիրում է խաչնարածությունն ու պղնձագործությունը և ընդհանրություններ է գտնում Հայաստանի և Բուլղարիայի որոշ վայրերի բնակչության զբաղմունքի և կենցաղի մեջ, ինչպես և Հարվարդի (ԱՄՆ) համալսարանի պրոֆեսոր անվանի մարդաբան և հնագետ Հենրի Ֆիլդը, որը զգալի ջանքեր է գործադրում ամերիկյան գիտական շրջաններին ծանոթացնելու սովետական մարդաբանական, ազգագրական և հնագիտական գրականության հետ։

Կոնգրեսի պատգամավորները այցելեցին մեր հանրապետության գիտական հաստատությունները, թանգարանները, հիշարժան վայրերը, բազմաթիվ գիտական հարցերի շուրջ զրույցներ ունեցան իրենց հայ գրչակիցների հետ, գրականություն փոխանակեցին. մի շարք դեպքերում սկիզբ դրվեց ապագա գիտական կապերի, որոնք երկուստեք կնպաստեն գիտության զարգացմանը և սրա նվաճումների մասսայականացմանը։

Կոնգրեսը և տարբեր երկրների գիտնականների անձնական շփումները խոշոր չափով օգնեցին փոխադարձաբար ավելի լավ ճանաչելու մարդաբանական և ազգագրական գիտությունների զարգացման ներկա մակարդակը և կոնկրետ նվաճումները ինչպես Սովետական Միության մեջ, նույնպես էլ արտասահմանում։ Կոնգրեսի մասնակիցները ավելի պարզ պատկերացում կազմեցին գիտության այս ճյուղերի բնագավառում եղած հիմնական ուղղությունների, սովետական գիտության մեթոդոլոգիական հիմունքների, ինչպես և առաջիկա խնդիրների վերաբերյալ։ Կոնգրեսի աշխատանքները, անշուշտ, նպաստեցին գիտական առանձին պրոբլեմներ, նույնիսկ բնագավառների հետագա զարգացմանը, և, որ կարևորն է, զգալի դեր խաղացին ժողովուրդների փոխըմբռնման, բարեկամության և նրանց գիտության ու մշակույթի առաջադիմության ճանապարհին։

Ռ. Ա.

ԴԻՏԱԿԱՆ ԼՈՍԱՆՇԱՆ՝
ՆՎԻՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հարյուր տարի առաջ, 1864 թ. սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ մի իրադարձություն, որին միանգամայն ուրույն տեղ էր վիճակված բոլոր դարերում մարդկության սոցիալական զարգացման պատմության մեջ։ Այդ օրը Լոնդոնում տեղավորված Միջազգային Աշխատավորական, Դեմոկրատական, Բոլորի, Լեհաստանի և Իտալիայի պրոլետարիատի ներկայացուցիչները հիմնադրեցին բանվորների միջազգային ընկերությունը՝ Առաջին Ինտերնացիոնալը։ Հանդես գալով բոլոր նրանց կենտրոնական շահերի միասնական պաշտպանությամբ, ովքեր «հարստանում են, մերկ և սոված», Ի Ինտերնացիոնալը բանվորական շարժումը տոգորեց նոր գաղափարներով, պարզեց պրոլետարիատի միջազգային համերաշխության գրոշը, մարտնչեց հանուն շահագործվող զանգվածների դասակարգային պայքարի միասնության և կազմակերպվածության, ապրելով այդ կոչին նպաստակատարություն, հանձնարարի պարզությունն։ Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից գլխավորված Ի Ինտերնացիոնալը՝ ծառանալով պատմական երկու դարաշրջանների սահմանագծին, մի կողմից եզրափակում էր կապիտալի բռնության դեմ բանվոր դասակարգի պայքարի առաջին շրջանը, մյուս կողմից՝ սկիզբ դնում նրա հեղափոխական շարժման նոր, իր ձևով և բովանդակությամբ ավելի բազմազան ու հարուստ շրջանին։

Ինտերնացիոնալի ոգին, նրա հիմնադիրը, բազմաբնակ ու կազմակերպական գնդավարը Կ. Մարքսն էր։ Նրա գրչին են պատկանում կազմակերպության բոլոր հիմնական փաստաթղթերը։ Կ. Մարքսը կազմեց Ինտերնացիոնալի սահմանագիր մանիֆեստը, որի մեջ իրենց գիտական արտացոլումը գտան բանվոր դասակարգի անելիքները։ Ըստ արժանվույն գնահատելով պրոլետարիատի տեսանելի պայքարի գերը, այնտեղ հիմնական շեշտը միշտ կերպով դրված էր բազմաբնակ գյուղացիների վրա, առանց որոնց անհնարին էր բազմաբնակ իշխանության հեղափոխությունը բանվոր դասակարգի կողմից։ Մանիֆեստում բնորոշվում էր, որ բուրժուազիայի դեմ պայքարում բանվոր դասակարգի հաղթանակի երաշխիքը նրա կազմակերպվածությունն է, մարտական կուսակցության առկայությունը, պրոլետարական զանգվածների բարձր գիտակցականությունը։ Գաղափարական այդ փաստաթուղթը չի կորցրել իր